ԱՍՏՂԻԿ ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ

Ա ՏԱՐԻ. ԹԻՒ 10. 1855 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1.

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿ

ՆԱԽԱՀԱՅՐ ՀԱՅՈՑ

Գրեթէ ողջէն եւս Բաբելոնի Աշտարակին շինութեանը պարագայ կորիճներէն մէկն էր Հայկ. և Նոյին Թոռանը Թորգոմին որդին։

Աշտարակին կործանուելէն և լեզուներուն բաժնուելէն ետև մարդիկ սկսան բազմաբար իրարու իշխել, որոնցմէ մէկն ալ Տիտանեան Բէլ որինքը Նեբրովթ կոչուած էր։

Աս անօրէն բռնաւորին միտքը ան էր որ բոլոր ամէնուն վրայ բռնաթեամբ իշխէ և ամէնէն աստուծոյ պէս պաշտուի։

Աստուածային վրէժխնդրութիւնը շարժեցաւ անոր վրայ. և ան ալ անոնց մէկու մը ձեռքով հատուցուեցաւ, որ Աստուածապաշտութեան ջերմեռանդութիւնը միշտ սրտին մէջ վառ ունենալով ան բռնկա դատախազ եղեր էր։

Իր Աստուածային շնորհքներուն հետ ունէր նաև մարմնոյ գեղեցկութիւն, բարձր հասակ, կորովութիւն, և քաջութիւն։

Խորենացի մեր քաջ պատմագիրը շատ աղէկ կը նկարագրէ Հայկայ ունեցած շնորհքներուն վրայօք։

„Այս, ասէ, Հայկ գեղապատշաճ

և անձնեայ, քաջադանդուր, խայտակն և հաստաբազուկ. սա 'ի մէջ սկայիցն քաջ և երևելի լեալ, ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն՝ միապետել 'ի վերայ ամենայն սկայիցն և դիւցազանց:" Խորէ. Գւ. Ժ. Երե. 52:

Հայկ լսելով որ Բէլ անունով խրոխտ հսկան իր պատկերը կանգնել տալով, զամէնը կ'ստիպէ անոր երկրպագութիւն ընելու, ու միայն Աստուծոյ արժանի պատույն ասանկ մէկ բռնաւորէ մը յափշտակուելուն սաստիկ նեղանալով, կը պատրաստուի Աստուծոյ կողմանէ վրէժխնդիր ըլլալ ան յանդուգն հպարտին: "Եւ վաղվաղակի կատարէին ամենայն ազգքն զհրամանս նորա. բայց մի ոմն Հայկ անուն նահապետ ազգացն ոչ հնազանդեցաւ 'ի ծառայութիւն նորա, և ոչ կանգնէր 'ի տան իւրում զպատկեր նորա և ոչ մեծարէր զնա Աստուածաւրէն շքով": Սեբ. Պատմութիւն. Ա. երես 4: Հայկ մէկէն 'ի մէկ իր երեք հարիւր կտրիճ ընկերներն ու ընտանիքը հետը առած դարձաւ Հայաստանի Արարատ գաւառին կողմերը եկաւ: Իր Կադմոս անունով թոռն ալ հոն նստեցընելով ինքը աւելի առաջ անցաւ և Հայաստանի ամէն բնակչաց կարգ և կանոն դրաւ որ ունեցած խաղաղութիւննին ու լեզունին չը կորսնցընեն:

Այրարատայ մօտ քաղաք մ'ալ շինեց, և անուանեց Հայկաշէն. իրեն բնակած գաւառին անունն ալ Հարք դրաւ:

"Որում ոչ կամեցեալ Հայկայ՝ հնազանդ լինել Բելայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրմենակ 'ի Բաբելոնի, չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է 'ի կողմանս Հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք՝ թուով իբրև երեք հարիւր, և այլովք ընդոծնօք, և եկօք յարեցելովք 'ի նա, և բոլոր աղխիւ:

Երթեալ բնակէ 'ի լեռնոտին միում 'ի դաշտավայրի, յորում սակաւք 'ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ, շինէ անդ տուն բնակութեան կալուածոյ, և տայ 'ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արմենակայ:

Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղխիւն ընդ արևմուտս Հիւսիսոյ, գայ բնակէ 'ի բարձրաւանդակ դաշտի միում. և անուանէ զանուն լեռնադաշտակին Հարք. այսինքն, աստէն բնակեալքս, ազգի տանն Թորգոմայ: Շինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն Հայկաշէն:" Խորէ. Գւ. Ժ. Երե. 54:

Բէլ նեղանալով Հայկայ անհնազանդութեանը վրայ իսկոյն իր որդիներէն մէկը խրկեց անոր որ գայ հնազանդի իրեն և խաղաղութեամբ բնակի իրեն հետ: Հայկ ականջ չը կախելով անոր, Աստուածային հզօր զօրութեանը վստահանալով նախապատիւ սեպեց ոլնով տեղով մեռնիլ քան թէ անագորոյն բռնաւորին չար և ասկալի հրամանը կատարել:

Նախախնամութիւնը որ ասանկ բարեպաշտ և առաքինի մարդոց միշտ բարեկամ է և օժանդակ անոնց բարի գործին, և այսպիսի բռնաւոր ամբարտաւաններուն ալ հակառակ և վրէժխնդիր, քաջալերեց խրախուսեց զԱստուածապաշտն Հայկ որ մէկէն 'ի մէկ ցատկելով արիաբար յորդորեց ժողվեց իր կտրիճներն իրեն քով, ու վազեց գնաց Վանայ ծովուն մօտ՝ դաշտին յարմար կողմը պատրաստ սպասելու: "Աստ և խոհեմ սկայն, քաջադանդուրն և խայտակն, աճապարեալ հաւաքէ զորդիս իւր և ըզ

թոռունս արս քաջս և աղեղնաւորս թուով յոյժ նուաղունս, և զայլ ևս որ ընդ իւրով ձեռամբ. հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն մանունս ունելով ձկունս յինքեան»։ Խորէ. Գւ. ԺԱ. Երե. 56։

Իսկ Բէլ՝ ամբարտաւանութեան և հպարտութեան բոցովը աւելի բորբոքած, և անձը զէնքին և մարդոց բազմութեանը վրայ դրած, մեծաւ զօրութեամբ Հայկայ վրայ վազեց։

Հայկ տեսաւ յանդուգն թշնամւոյն վազուած խումբը, որուն մէջ Բէլ շատ մը ընտրեալ քաջերով ամբոխէն բաւական հեռու խումբին առջևը կայներ էր. երկաթէ գլխանոց մը գլուխը դրած. կռնըկին ու կուրծքին վրայէն պղնձէ տախտակ հագած և ամէն կողմէն զրահաւորած, աջ ձեռքով նիզակը, ձախով վահանը և շատ մը ընտիր մարդիկներ իր երկու կողմը բռնած էր։

Հայկ նահապետ ալ այս մեծ և ահեղ պատրաստութեանը դէմ անվեհեր սրտով Արմենակ իր երկու եղբօրը հետ իր աջ դին կայնեցուց, Կադմոսը և իր զաւկըներէն ուրիշ երկուք ալ ձախ դին, ինքը առջևէն, և միւսներնալ ետևէն երեքանկիւնի ձևով հանդարտ առաջ քալեց։

Բէլ Հայկին համարձակութեանը վրայ զարմանալով քիչ մը զօրքով առաջ անցաւ որ հասկընայ թէ Հայկ ինչո՞ւն ապաւիններ է. իսկ ան երբոր անոր յառաջ գալը տեսաւ յարմար ժամանակ է ըսելով սիրտ տուաւ իր կորիւններուն որ շուտով Բէլին վրայ վազեն ու ամէնքը մէկէն անոր հետ զարնըվին, ըսաւ ու մէկէն վրան յարձակեցաւ։

Անձնապաստանն Բէլ իսկոյն շփոթեցաւ. կուզէր ետ քաշուիլ բայց շարժելու ատեն չը մնաց։ Կորովին Հայկ քաշեց երեքթևեան լայնալիճ աղեղը, անանկ սաստիկ ուժով զարկաւ նետը Բէլին կուրծքին, որ առջևի պղնձէ զրահէն մտնուց և կռնըկէն դուրս հանեց. ինկաւ և յերկիր կործանեցաւ աստուածակարծեալն հսկան, մաքըլուրն Բէլ. փչեց հոգին. զօրքը մէկէն ցրուեցան, և բոլոր աշխարհք ազատեցաւ այնպիսի բռնաւորի մը ձեռքէն որ կուզէր Աստուածպաշտութիւնը ջնջել և ինքզինքը պաշտել տալ։ «Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ, յառաջ վարէ զինքն մօտ հասանէ յարքային լի քարշէ զլինս զլայնալիճն. դիպուցանէ զերեքթևեանն կրծից տախտակին, և շէշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր անկանի սլաքն, և այսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ և փչէ զոգին։ Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեանն, փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց»։ Խորէ. Գւ. ԺԱ. Երե. 59։

Հայկ հրամայեց որ Բէլայ մարմինը զմուսեն ու Հարք գաւառին մէջ բարձր տեղ մը թաղեն, որ մարդս տեսնելով հոն մէկ կողմը Նոյի տապանը միտքը բերէ մարդուս անկարգութեանցը համար եղած պատիժը. մէկալ կողմնալ նայի անաստուածութեան և հպարտութեան ախտին վերջը ուր մնածէ։

Իսկ ան բլուրը՝ ուր Բէլ իր զօրքովը ինկաւ Գերեզման կոչեց, որ հիմա Գերեզմանք կ'ըսեն։ Աս Աստուածատուր փառաւոր յաղթութենէն ետև Հայկ Բէլայ հետ պատերազմ ըրած տեղը քաղաք շինել տուաւ և անունը Հայք դրաւ, որ ետքը ան գաւառին անունն ալ Հայոց ձոր ըսուեցաւ։ Ինքը մեծ յաղթանակաւ Հարք գաւառը դարձաւ շատ քաղաքներ շինեց ու կարգեր կանոններ դրաւ։ Ասանկով, շատ տարիներ խաղաղութեամբ տիրելէն ետև տէրութիւնը

իր Արմենակ տղուն յանձնեց և չորս հարիւր տարուան մեռաւ ։

Հայկայ Աստուծոյ վրայ ունեցած սէրը այնքան առաւել էր, որ յօժարակամ ախոյեան կեցաւ Բելայ անիրաւ բռնութեանը դէմ. և այս գեղեցիկ գործքով ազատեց իր ազնիւ ցեղը անոր պատրաստելիք խաւարային բաւիղէն նախնեաց Աստուածպաշտութեան ջերմեռանդութիւնը անխոտոր և անարգել պահելով։

Թէև իր որդիքը ժամանակէ մը ետև անոր ջերմեռանդութիւնը կորուսին, բայց Աստուածային աջանչելի զօրութեամբը կրկին Աբգարու ձեռքով Քրիստոնէութեան լուսաւոր պատմուճանը զգեցան և զանի պաշտպանեցին անձերնին ու տէրութիւնին կորսնցընելով և զանազան մեծամեծ պատերազմներու մէջ արիւն թափելով, որ մինչև հիմա Լուսաւորչաւանդ անարատ և անբիծ կրօնքը անխոտոր կը ժառանգեն և այսուհետև ալ պիտի ժառանգեն զայն միշտ և յաւիտեան ։

ԲՆՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ [1]

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Պարտ է բարւոք կալ յերկրի, զի միանձն Թիւրեացի յուցցանութեան շարժման ։

ԲԱԺԱՆՈՒՄՆ

Ուղղութիւն անձին 'ի բարւոյ շարժմանէ իւր երեք մասն է. կրօնիւք, ուսմամբ, վարուք ։

Աստուածպաշտութիւնն՝ որ շարժումն անձին եղանակաւորէ բարւոք կալ յերկրի. կատարի սիրով ընկերին և երկիւղիւ Տեառն ։

[1] Տես Թիւ 9 երես 137 ։

Ուսմամբ գիտութեանց արհեստից. ուղիղ դաստիարակութեամբ կրթութեան և ջանիւ անխոնջ աշխատութեան զարգանայ ։

Համեստութիւն վարուց խոնարհամիտ հեզութեամբն կատարելագործեն զգործ անձին յօրէնս բարոյականութեան. որոյ գովութիւնն հռչակ առնու 'ի ախեղերն առաջի ազգաց երկրի ։

Այս թիւրութիւն շարժման անձին յուղղութենէն լինել առանց կրօնից առանց ուսմանց և առանց վարուց ։

ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Եւ զայսորիկ ձեր յանձին կալեալ զարժանայարգ ուսմունս հարուստ իմացուածոց ջանադիր լերուք եղանակել 'ի վարս ձեր զընտական նախագիծ ուղղութեան անձին ձերոց, որ անդ զառաջինն 'ի պատկերի Աստուծոյ արարաւ մարդկութեան օրէնք հաճոյիցն նորա շարժիլ, և զոր դըրոշմեաց 'ի մեզ մկրտութիւն և 'ի հոգւոյն վերստին ծննդեան հոգւովն Աստուծոյ վարիլ ստէպ յաշխարհի 'ի վայելչութիւն երկնային անանց փառացն ։ Եւ զօրէնս բարոյականութեան ուսմանց պինդ անձիւք հետամուտ լինել զոր կանգնեալ ցուցին մեզ նախաժամանն իմաստունք երկրի, և աստուածախօս պատգամք Հոգւոյն սրբոյ յաւետարանս Տեառն Յիսուսի Քրիստոսի, ուղիղս ընթանալ 'ի նախագիծ կէտ արդարչութեան յուղղութեան կատարելութեն մարդկային, որ երեքկին ստորաձան են նորա ըստ մտաց, ըստ կամաց, ըստ գործոց ապաքէն վերին տեսչութիւնն իմաստնական ոչ թափուր եթող զայսոսիկ, իւրակերպս ստորաձանան յունայնալից պարարտութիւնն, այլ ըստ

քանքարի առակի սերտն մերոյ լցոյց զսոսա կատարելութեամբ 'ի շնորհս իւր ։ Եւ ըստ խտերից աստիճանացն շնորհեաց չքնաղբուն խմաստութենէ իւրմէ զերիս սեռակս կատարելուէ հոգենիւթ շնորհաց, որք են ճշմարտութիւն 'ի միտս, սրբութիւն 'ի կամս, արդարութիւն 'ի գործս ։ Սոքին իսկ են խաղաղական կատարելութիւնք հոգւոյն 'ի խիղճ իւր. ուրովք անխռով ընդ ալեացն լինի անձն յուղիղ շարժումն իւր, ուր հոգին 'ի յարազուարճ բերկրութիւն իւր ցնծայ հանապազ անախորական խնդութեամբ թարց աղետալիր ոգւոյ չարչարանաց անձին տագնապաւ խղճին իւրոյ ։ Եւ այսպէս սոցին ներհականոքն երեւք թխի անձն 'ի համապատշաճ նախատեղծ ուղղութենէն 'ի մոլորուն ընթացս խառորուն շարժման, ուր թափանցանէ 'ի միտս ստութիւն. 'ի կամս չարութիւն, 'ի գործս անիրաւութիւն ։ Եւ յայսմ իսկ է վատթարութիւն մարդւոյն 'ի խուժան բարս ռամկական. եւ 'ի բարբարոսական. յանօրէն բռնաբարուն բանաւորական. եւ 'ի չարանիք լոտրդախ դիւամոլ պատրանս խաբէութեան ։ Ընդ եղծանի տեսիլ գեղատիպ լուսափայլ դիմաց հոգւոյն 'ի նախատիպ իւր, ըստ պատկերի արարչին իւրոյ աստուծոյ ։ Ընդ եւ հոգին յահարկու եւ 'ի զզուոսի զեղծեալ դէմսն յայնսիկ զարհուրանօք խռովի խայթոցաւ խղճին յեղծումն եւ յապականութիւն, նախակերպարան լուսափայլ դիմացն եւ ընդ կորուստ նախադիր փառաց հոգեկան լուսաւոր վայելչութեան, աղօտամութ նսեմութեամբ խաւարին. ստութեան, չարութեան, անիրաւութեան ։

Ապաքէն Աստուածապարգեւ եւ լուսանիւթ թուական կէտ իմն են նոքին ճշմարտութիւն, սրբութիւն արդարութիւն. ըստ երից թուական աստիճանաց հոգւոյն զօրութեան, ըստ մտաց, ըստ կամաց ըստ գործոց ։ Եւ ապա 'ի թուաբանական օրէնս կէտք բազմացուցանեն զմիաւորն 'ի հարուստ թիւ տասնաւորաց, հարիւրաւորաց, հազարաւորաց. եւ կրկնեամբ կէտիցն բազմաւորքն դառնան 'ի միաւոր սակաւ թուոց ։ Նոյնպէս ստութեամբ, ընդ կորուստ ճշմարտութեան, չարութեամբ, ընդ կորուստ բարութեան. անիրաւութեամբ, ընդ կորուստ արդարութեան. տագնապաւ վշտանայ հոգին 'ի խիղճ իւր ընդ կորուստ լուսանիւթ բազմաւորական կէտից փառաւոր աստիճանաց ։ Ըստ առակի անառակին, զրկեալ 'ի փառացն վայելչութենէ ծնողական նախնի հայրենի ժառանգութեան անցեալ յաստիճանս ստորին խղճալի հովուութէ, եւ նոքիմբ առաւելեալ անձին իբր 'ի նորախատակ շահ իւր ըստ քանքարիառակին, քանիցս անգամ թէ առաւելուցու զճշմարտութիւն՝ 'ի միտս իւր. զսրբութիւն՝ 'ի կամս իւր. զարդարութիւն՝ 'ի գործս իւր. բազմանան լուսահետք նոցուն. իսկ թուական աստիճանաց հոգւոյն զօրութեան, յայս հայի եւ իսկականօքն խորհուրդ առակի սերմանացուցանէն ։ Եւ ոմն անկաւ յերկիր բարի, եւ տայր զպտուղ. է որ երեսուն, եւ է որ վաթսուն. եւ է որ հարիւր ։ Եւ որ ունայնացան սերմունք անկեալ յապառաժուտն, առ ճանապարհաւ եւ 'ի մէջ փշոյն՝ ընդունայն իսկ եղեն յարդիւնաբերութեան բազմաւորական. ըստ այսմ են շիջեալ լապտերք յիմարաց ըստ նուազութեան եւ ընդ կորուստ իւղոյն կուսանաց, որք զրկեցան 'ի հանդիսական բերկրանաց զուարճութեան հարսանեաց փեսային ։

Եւ այն առակ քանքարին. Տէր ահա հինգ քանքար ետուր ինձ հինգ

քանքար այլ ևս շահեցայ։ Այս է արդիւնաւորութիւն հոգւոյն յաւելուածով թուական աստիճանաց 'ի կէտ բաղմաւորական 'ի յաճախութիւն փառաց երկնային վայելչութեան. ըստ որում և ասէ. ծառայ բարի և հաւատարիմ, որովհետեւ 'ի սակաւուց հաւատարիմ ես 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քո։

Ապաքէն յամէնայնի և միշտ գիւրապատարաստ են միջոցք 'ի թէական հնարս ամենայն իրաց. որք իբր սատարիչ գործոյն նպաստաւորք լինին կատարելութեան շարժման. որոց 'ի չըլլինելն ոչ ինչ կատարած առնուն խորհուրդք 'ի գործ կատարեալ։ Այս է և այն վճիռ իմաստնոյն 'ի հնարս իմաստութեան։ «'Ի միտ բարի հանդչի (ասէ) իմաստութիւնն»։ Իւր ներհականօքն խօսի անհնարին յիմիք յիմաստութեան լինել. «Յանձն չարաբարեստ իմաստութիւն ոչ բնակէ»։ Ըստ նմին և առաքեալք 'ի զանազան թուղթսն յայտնի ցուցանեն զմիջոց հնարից ուղղութեան շարժման հոգւոյն 'ինախատեղծ գիծ իւր արարչութեան։

Ըստ այնմ։ Փիլիպ. Դ. 8։—Լեւ. Դ. 17։—Ա. Կոր. Բ. 1.—Լեւ. Զ. 10։—Ա. Թես. Ե. 5։

ՅՈՐԴՈՐԱԿ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ

Ապա դուք լուսաւորքդ յերկրի. հաստատուն կացէք 'ի լուսագիծ կէտ աստիճանաց հոգւոյն զօրութեան, զի 'ի ձեզ իցէ շարժումն հոգւոյն 'ինախատեղծ յուղիղ գիծ իւր աստուածային լինիլ անձին 'ի լաւ անդր։ Տեղական շարժմամբն փոխեալ յերկիրս յերկինս հաւատովքն Քրիստոսի տեառն մերոյ. յանմահութեան հոգւոյն։

Իւր գոյացական շարժմամբ զարգանալ 'ի լուսաշող ճառանչս իմաստութեան աշխարհաստեղծ լուսոյն, զի ծագեսջիք պայծառափայլ իմաստութեամբ ձերով 'ի ջահ բազմաճրագ 'ի լուսաւորութիւն փառաց պայծառութեան մեծի Տանն քաջինն աշխարհի նախնոյն մերոյ Հայկայ. և յոսկեձոյլ աշտանակ լուսավառ նորին համասերունդ ծնողաց. մարթ եղեալ ընդ գէմ կրից խաբուսիկ պատրանաց նորա, յաղթեցէք մեծաջան արիութեամբ զդրդիւ վհատութեան առեալ զյաղթանակ ջանասէր ոգեկնութեան ձերոյ պսակաւ փառաց իմաստութեան, որ և է իսկ գանձ անկշռելի բազմագանձ հարստութենց թագաւորաց։

Ի Մելիտոպոլիս յեր Լիմ, Լիբրոլեն զյեր Փիլիպոսի։

1851 Մարտ 22

Ի Ժողովարանս ռուսական դասուն մեծի դպրոցին Սուրբ Փրկչի Յիսուսեայ։

Կորսուած ոչխար[1]։

Ամառ օր մը մէկ քանի տարի առաջ այն տարիքն ուր որ մեր պատմութիւնը մէջ բերած է, մէկ Անգլիացի բժիշկ մը Ամստերտամի մէջ բնակած ըլլալով, ձկնորսներու փոքրիկ գեղի մը ծովափը պտըտած ժամանակը, ուր տեղուանքը ճանապարհորդութիւն կընէր, թէ իւր առողջութեանը համար և թէ միանգամայն տեսարանի փոփոխութեանը համար ինչպէս Հոլանտայի այն տափարակ երկիրը կընծայէ, ձկնորսի մը խրճիթին առջևէն անցած ժամանակը ցնցոտի հագուստներով աղքատիկ տղու մը անկատար կերպով արտա-

[1] Տես թիւ 9 երես 137։

սանած մէկ քանի Անգղիարէն խօսքերը աղնուականին մտադրութիւնը արթնցուցին և տղուն պատկերը գեղի տղայը դէմքէն տարբեր էր։ Աղնուականին հետաքրքրութիւնը աւելցաւ և խրճիթին դրանը առջևը նստած մարդուն հետ, որն որ իւր ուռկանը կը կարկըտէր, խօսակցելով հետևեալ մանաւոր յայտնութիւնները իմացաւ։

Հազիւ թէ կրնամ ըսել Հոլանդայի բնիկ լեզուովը կը խօսէին։ Երեք տարի առաջ ըսաւ ձկնորսը, մարտի մեծ փոթորկին եաքի օրը, ծովը ելայ իմ ձկնորսի նաւակովս, և դեռ իմ ուռկաններս նետեր էի քիչ մը հեռուն փոքրիկ նաւակ մը տեսայ, որնոր սունկի պէս ալիքներուն վրայ կը տատանէր։ Առջի բերան կարծեցի որ մէջը պարապ է, բայց երբոր քիչ մը մօտեցայ տեսայ որ մէջը կէս խղդուած շուն մը կայ, հագուստներու ծրար մը նաւակին նստարանին վրայ կապած. և այդ ծրարը, տղայ մընէր պատասխանեց ձկնորսը, և ալ յաղթանդամ դեր տղայ մը. բայց կենդանութեան նշան մը չի կար վրան. վրան զի նաւակին կէսը ջրով լեցուն էր, և պզտի խեղճ տղան ալ բոլորովին թրջած, և սպառած էր ցուրտէն ու խղդուելէն։

Ինչ և իցէ փոքրիկ նաւակը չուանով եաևս կապած՝ շուտով որչափ որ առագաստն ու թիերը կրցան ինծի ծառայելնէ, տուն տարի, և իմ ու կնոջըս օգնականութեամբը փոքրիկ տղուն խելքը գլուխը եկաւ։

Երբոր տղան առողջացաւ նէ կըրցա՞ր անոր վրայօք տեղեկութիւն մը առնել, հարցուց աղնուականը, Ո՛չ, տէ՛ր, պատասխանեց ձկնորսը, թէ և անիկա տրտմութեամբ կուլար և իւր լեզուովը կը խօսէր, բայց բան մը չի կրցայ հասկնալ։ Անիկա օտարական մըներ. այդ յայտնի է։

Յիրաւի, ըսաւ բժիշկը, հաւաստեաւ Անգղիացի է։

Ձկնորսը այն ատեն սկսաւ պատմել. որ ժամանակէ մը ետքը երբոր երկար հիւանդութենէ մը առողջացաւ որն որ իւր ազատելէն ետքը վրան եկեր էր, տղան իւր ճակատագրին հետ հաշտուեցաւ և ըսելով նոյն երկրին լեզուէն՝ սորվեցաւ. բայց ամենևին չէր խօսէր բաց 'ի վերաբերեալ խօսքերէն։

Երբոր պզտի ընկեցիկ տղան իւր բուն տղաքներուն հետ մտերմացաւ կամաւորապէս անոնց հետ միացաւ իբր ընտանեաց մէջէն մէկը։

Ի վերայ այսր ամենայնի կուզե՞ս անկէ բաժնուիլ թէ որ ան հոգէն թեթևցընելու ըլլամ ըսաւ աղնուականը։

Ինչո՞ւ, հարցուց ձկնորսը, համարձակ ու խոժոռ աչքով մը դէպ 'ի աղնուականին նայելով։ Իմ բարեկամս, ես հիմա արդարապէս պիտի պատասխանեմ. նախ ես հարուստ եմ, և կարող անոր համար ծախք ընելու, որն որ քեզի համար պզտի բան մը չէ։ Նաև ես կը տեսնամ որ տղան իմ բուն երկրէս է. առաջին անգամ անոր ձայնը լսածիս պէս սիրտըս անոր վրայ տաքցաւ, ասկէ զատ ես կրնամ խեղճ տղուն բարեկամները հայրը ու մայրը գտնալ, և թէ որ չի կրնամ գտնալ, ես տղայ չունիմ, զանի ինծի որդեգիր կընեմ. կը հաճի՞ս ասոր։

Առջի բերան ձկնորսը տարակուսած մնաց. բայց վերջը աղնուականին բարի դիտաւորութեանը խելքը պառկած և տղուն վերջի ըրած մարդասիրութեանը համար անոր ընծայած մէկ մեծ հատուցմամբ մը հըրապուրուած, հաւանեցաւ տղէն բաժնուիլ, և մէկ քանի օրուան մէջ բարեսիրտ բժիշկը Ամստերտամ դարձաւ տղուն գքա-

ճուած ժամանակը ունեցած հագուստովը և զանի փաթթուած վերարկուովը։

Իւր ղաղամանը մեռեր էր, ազնուականին առաջին գործը եղաւ տղուն ազգականները փնտռել։

Բայց շուտով հասկցաւ որ անկա գրեթէ անյոյս հետազօտութիւն մ'ըներ, այսպէս այն փոթորկին աւերու մը անանկ համաշխարհական էր և այնչափ ամէն հասակէ ու սեռակէ նաւերու որոնք այն ժամանակը ծովուն վրայ կորսուեր էին։ Անգամ մը ազնուականը կարծեց որ յաջողեցաւ, վասն զի գտցաւ որ Անգղիացի ազնուական մը իւր կնաւը ու տղովը, որուն անունն էր Սմիթհ, Ռուսի նաւով մը կը ճանապարհորդէին, որն որ Հոլանտայի եզերքը խորտակեր էր այն սոսկալի փոթորկին օրը. և երբոր պզտի տղան գտնուած ժամանակը վրան ունեցած հագուստին վրայ Է. Ս. նշանակեալ գիրերը տեսաւ, անտարակոյս գտցաւ որ այս այն տղան է, ու միանգամայն իմացաւ թէ հայրը ու մայրը խեղդուած էին նաւուն նաւաստեաց մեծ մասին հետ։ Պ. Հէնրի այն ժամանակ ազնուականին բոլոր հետազօտութենէն ետքը Անգղիայի մէջ փնտռտուքի ինկաւ, բայց որչափ Սմիթհ անուամբ մարդ կային, և ոչ մէկը այս խեղճ ընկեցիկ տղան պահանջեց։

Այս կերպով ազնուական բժիշկը խորհելով, որ բաւական այն գործին վրայ ջանք ըրաւ, ուրախութեամբ իրեն որդեգրեց, և իւր բուն զաւկին պէս սնուցեց, բնական անունը տալով անոր "Եդուարդ Սմիթհ"։ Երբոր ձկնորսին խրճիթին մէջէն Պ. Հէնրիին ձեռքովը գտնուեցաւ տղան, իւր կանուխ տղայութեանը անցնելին մէկ բանը չէր յիշեր, և գրեթէ իւր բնիկ լեզուն ալ մոռցած էր։

Կրնայ ըլլալ որ նաւաբեկութեան սոսկալի տեսարանները և իւր ետքէն ունեցած երկարատև հիւանդութիւնը անոր ուրիշ կողմանէ գիտցածները յիշողութենէն մոռցուցած ըլլան։

Անիկա մէկ անակնկալ պարագայ մը չէ, ես դէպքեր լսեր եմ, որոնց մէջ ծեր մարդիկներ իրենց անցած կենացը մէջ պատահածները և բոլոր սորվածնին մոռցած են բոլորովին. մինչև այբուբենին գիրերն անգամ խիստ դառն ու երկայն նեղութեանց հետևանքներով։

Ուստի պէտք չէ զարմանալ որ Եդուարդ Սմիթհը իւր գիտցածը մոռցած է կամ երկար տարիներէ 'ի վեր օտարականներու մէջ կենալով անոր վրայօք տեղեկութիւն մը առնուած էր. և սակայն երբեմն երբեմն կը շփոթէր, օրինակի համար առջի բերան երբոր Սմիթհ կոչուեցաւ, կը զարմանար որ ինչպէս այն անունը Եդուարդէն աւելի օտար կուգար, որուն ինքը յօժարութեամբ պատասխանեց։ Երբոր կըսէին թէ իւր խեղճ մայրը նաւուն մէջ հեռներ երբոր խորտակեցաւ, անիկա իրեն օտար բան մը կուգար այս բանը չի կրնալ յիշելուն համար։ Բայց ընդ հակառակն երբեմն երբեմն իւր մտքին մէջ յիշողութեան աղօտ ճառագայթ մը ծագելով առաջը կը ներկայացընէր սիրելի անձնոց մը պատկերը, որն որ իւր քովը պզտիկ տղով մը միածի կառքի մը դուռնը առջեւ կայնած, նաւը տարաւ, կրկնակի անձկանօք զինքը կը պագնէր իւր հրաժարական ողջոյնը տալով։ Թէ որ անիկա իմ մայրս չէ նէ, ո՛վ կրնար ըլլալ արդեօք, կըսէր խեղճ տղան ինքնիրեն, բայց երբոր այսպիսի հարցմանցը հաճոյական պատասխաններ չէր ըլլար կը դադարէր անոնց վրայօք խորհելէն, բայց 'ի վերայ այսր ամենայնի երբեմն կը մտածէր։

Տարիներ անցաւ, և Պ. Հէնրի

ամենևին պատճառ մը չունեցաւ ազ-
նիւ մարդասիրութեանը համար վի-
րաւորելու ու վշտանալու։ Էդուարդ
հլու ու երախտագէտ աղայմնէր, և
քանի որ կրթութիւնը անոր միտքը
կը բանար, շատ մեծ ապաղանդներու
յոյս կուտար, որոնք իւր պաշտպա-
նը մեծապէս կուրախացնէին, որն որ
երբոր պատեհ ժամանակը հասաւ
կանոնաւոր կերպով իւր բուն արհեստ-
ին գիտութեանը մէջ խօթեց զանի,
բայց մարդասէր բժիշկը չի կրցաւ
իւր սկսածը կատարելու չափ ապրիլ։
Տասներկու տարեկան երբոր եղաւ
Էդուարդ իր պաշտպանը մեռաւ ժա-
ռանգութեան մեծ մասը անոր թողլով,
որն որ ալեկ յաջողակութեամբ ու մեծ ճարտարութեամբ
ստացեր էր։

Խեղճ տղան քանի կերթար տա-
րիքը կառնէր, և հիմա սկսեր թէ
մարդկութեան հասակը հասեր էր և
առջի բերան ինքն արեկամ մնաց, թէ
և անբարեկամ բայց հարուստ։

Իւր մարդասէր բարերարին մահ-
ուան պատճառած տխուր զգաց-
մունքները թեթեւցնելու համար միտ-
քը դրաւ որ ճանապարհորդէ. և
այս կերպով զբաղած ժամանակներ
որ անակնկալ կերպով խնդրուեցաւ
իրմէ Անգլիացի մը բժշկել, որ
այն միջոցաւ իւր ջուռնեցածը այսինքն
բարեկամը ձեռք ձգեց։ Թէ և Կարոլոս
Էլդօն այս գլխուն մէջ պատմուած
պատմութեանը տեղեակ չէր, երբոր
ան նամակը գրեց, զոր նոր հիմա յի-
շեցի, ան բոլորովին վայրք դիտէր
ինքը ու իւր Էդուարդ բարեկամը
Անգլիա հասնելէն առաջ և իւր տը-
ղայութեան ժամանակը հՕրը իրեն
պատմած պատմութիւնը յիշեցուց,
իւր մէկ ծեր բարեկամին վրայՕք, որն
որ շատ տարի առաջ իւր տղովը նա-
ւաբեկութեան հանդիպած ու խըղ-
դուած էր բայց 'ի վերայ այսր ամե-
նայնի չի պատահեցաւ որ Կարոլոս
Էլդօն այս ու այն պատմութիւնը
մեկտեղ դնէր, ու անոնց երկուքէն
տեսակ մը վիպասանութիւն չինէր,

(Պէտ ղարոնակոտ)

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Յուդայի երկիր։

Ասիկայ՝ լեռնոտ հանգմընէ երկ-
րին դէպ 'ի կեդրոնը տարածուած բայց
աւելի Յորդանանու մօտ է քան թէ
ծովուն, ուր Երուսաղէմ ու Էփրո-
նը չինուած էն։ Ճանապարհորդներէն
ոմանք կը պատմեն թէ "երկրին տեսքը
հիմա մթին ու տխուր է, ծառերը
քիչ ու մանր, խոտերն ալ չորցած
են հողը պարարտ կակուղ ու խոր
չլլալուն համար։ Ամիսներն ելլելնէս
երկու ժամուկէս ետքը Յուդայի
երկրին լեռնաբլուրներն ու բարձունք-
ները սկսան երևալ, որոնք հաղար
հինգ հարիւր ոտք բարձրութեամբ
գլուխնին մինչև ամպերը կը հասնէր,
հոս ու հոն ժայռեր ու միայն քանի
մը թուփ կը տեսնուէր։ Երբոր լե-
բանոնց կիրճերը մտանք, սկսանք խոր
ու անհարթ ճամբաներէ առաջ եր-
թալ մէկ կողմը կը տեսնուէր խոշ-
որ ու սուր ապառաժներ, մէկ կող-
մը ձմեռուան հեղեղներուն չորցած
ու քարոտ անցքերը, անելանելի բարձ-
ունքներ, որոնցմէ մագլցի կ'ստիպ-
ուէինք վեր ելլել։ Այսպիսի դըժ-
ուարութեամբ ճամբանիս շարունակ-
եցինք մինչև որ հասանք պաղ ու
անուշ ջրի հորի մը քով, որուն մէկ
կողմը ապարանի մը աւերակները կը
կենային, և կերևար թէ այս փլա-
տակը զօրական բնակութիւնմը նէ ե-
ղեր նոյն տեղերուն պահպանութիւն
ընելու։"

Ճամբան գրեթէ նոյն անհարթու-

թեամբը կը շարունակէ. բլուրներու հեռուէն կըր ու գեղեցիկ ձև մը ունին, վարի կողմերը իրար միացած ու գագաթնին մանուսար դիրքով մը կեցած։ Այս լեռները մշակուած յարմար չեն, մինակ գագաթնին քանի մը տեղ հերկուած է։ Հիւսիսային կողմը եղած ճամբաները ալէկ շինուած են, նոյն տեղի բնակիչներնալ համեստ ու ճարտար, ուր հասարակ ժողովրդոց խօսակցութիւնը մարդս շատ անգամ կը զարմացնէ։ Բայց Պաղեստինի բլուրներուն մէջ ճամբաները անանցանելի ու միայն անարդ ու գծուծ աւազակներու որջերը կը տեսնուին, որոնց անգթութիւնը ճանապարհորդի մը արիւնը կը պաղեցնէն։ Յուդայի երկրին այս մասը Մեռեալ ծովուն արևմտեան կողմէն դէպ ի հիւսիս եղած սահմաններ որոնը Հրիքովէն շատ հեռու չէ։ Ս. Յապա ըսուած ձորը մարմրիսներեայ ճղքուած լեռան մը մէջ ընդարձակ անցքմը նէ, Այս տեղ չէ թէ միայն ծառ չի գտնուիր հապա և ոչ մէկ տեսակ մը բուսական. եւ զած բնակիչներնալ՝ մենաստաններուն մէջ գտնուած կրօնաւորներէն զատ, արծիւներն, վագրերն ու վայրենի արապներնեն։ Դանի որ յաւաչանալու ըլլալի, լերանց տեսքը նոյնը կը շարունակէ, ուր ոչ հովտի մը ոչ զովուկ անտառ մը, ոչ ծառ մը և ոչ ալ կանաչ մը կամ մանուռ մը կը գտնուի միայն լերանց կոյտ մը։

Խոլոր եւ կիրը չոր ու անբերրիկ լեռները ժայռերով ու ապառաժներով լեցուած, ձախ կողմը խորին ձորի մը մէջ քանի մը հիւղերու ու խրճիթներու տեղերները կերևան. ուր կրսեն թէ անապատականներ կը բնակէին խստամբերութեան համար և շիտակը խօսելու համար աշխարհիս մէջ ասկէ աւելի անհանգիստ տեղ մը չի կրնար գտնուիլ, ատանկ նպատակի մը հասնելու համար։ Բլուրներուն ծայրէն թէ որ նայուելու ըլլալի՝ Հրաբիոյ լեռները, Մեռեալ ծովը, Հրիքովի գաշտը ամէնը մէկ տեղ բնութեան մէկ զարմանալի գործը կը պատկերացնեն։ Հեռուէն ուրիշ բարձր լեռներնալ կը տեսնուի, որուն գագաթը պիտի մնոռուռ մը կայ։ Քիչ մը անդին ուրիշ մ'ալ շինուած է ժայռին ցցուած մէկ մասին վրայ։ Այս վերջի մասուան մասը զանազան այրեր ու խոռոչներ կան լեռան մէջ։

ԱՌԱԿ

Ճանճ եւ Կեցու։

Ճանճին օր մը երբ տեսաւ որ մեղուին,
Ծաղկանց ծաւծը ծքծել կ'երթար պարտէզը,
Ծիծաղելով, քովիկն կենաց ու ըսաւ,
Ընկեր, գիտցիր, կը մեղքնամ քեզ, իրաւ,
Երբ կը տեսնամ որ առտուընէ իրիկուն,
Գլուխդ կախած միշտ կը ճղռնես օրն ի բուն.
Արեգական դեռ լոյսն աշխարհ չը ծագած,
Թևերդ հովուն տրուած կերթաս վայն ի վայ.
Ե՛զաբ, ի՞նչու կը շարչարիս դու ատանկ,
Գոնե քիչմ'ալ մեկուն գիր քու աշխատանքդ։
Ես սկ անհոգ միշտ ամէն օր տան մէջերն.
Արդեսք հետիին նրատած կուտեմ լաւ բաներ.
Ո՛չ կ'աշխատիմ ո՛չ կը հոգնիմ քրտնահար,
Գիշերն հանգիստ ցերեկն հանգարտ եմ ի պար.
Ասկէ ալէկ, ուրիշ ի՞նչ կայ բարեկամ,
Կեանքս նայիմ զի այսօր կամ վաղն չըկամ.
Քառասուն տարով այրին մէջնեմ մնացած,
Կերթամ պակաս թէ ազբիւրին ջուրն հատած.
Գարտասէրբէս պիտի փախնամ որ մրմնուն,
Ընտանիքս թողում փախչիմ ես հեռուն.
Հոգեւոր արքէօր պիտ'որ քաղէ, տեսնայնէ,
Շեմ ուրանար թո՛ղ փորն առնէ գրտնայնէ.
Սեռնիմ ալ նէ ինչ՞ս կառնէ խեղճացի,
Որ վախն ի վախ ես պիտ' շինչեմ, քանչ եղի։
Բայց ժիր մեղուն տկանչ չէր տար Ճանճիին.
Ամ բաղալով, միշտ կը նայէր իր գործին։
Գարունն անցաւ, ամառն խիստ դաս մեր Ճանճին,
Անցաց օրեր հանգիստ առատ երջանիկ.
Աշունն անուշ հովանի մայրած կը պարէր,
Ջերմ արևուն լուսոյն գիմաց կը ցատկէր։
Բայց շատ չանցաւ, հատաւ ձրմեռն մատղտկոյն,
Ձունն ու կարկուտ, անձրև կուգար սոսկալի.
Հովն ու քամին անանկ սատսիկ կը փչէր,
Որ խիստ ցրտէն գոպցես աշխարհ կը մրսէր։
Բայց մեղուիկը ուրախ զբաղած գիմեմակը։

Նըստած հանգիստ կերգէր տխուր իւր երգը.
Ցըրտէն ճանճին հոգին կելնէր շարաչար.
Խեղճը տեղ մը չունէր ըլնար որ երթար.
Լաւ մտածեց հին բարեկամն ժիր ճարպիկ.
Վըստահեցաւ մաղթել անկէ հեգ խրտիկ.
Շերիբայեցաւ ճամբայ ինկաւ հեւալով.
Շարչարվեցաւ, հազիւ հասաւ մեղուին քով։
«Ը՛նկեր, ը՛նկեր, կանչեց դրսէն դողալով.
Խնայէ ինձի ներս տա, ը՛նկեր, ցիս շատով.
Չի ցուրտն անձրև կը տանչէն ցիս խիստ սատիկ.
Նօթի, ծարաւ բան մը չունիմ ուտելիք.
Փոխուկ կեանքս պիտի անշուշտ փրճանայ.
Ցըրտաս արտուռ երբոր ցուրտը աւելնայ.
Չէ՛, ցիս քիչ տեղանակից մի՛ գոչէր.
Դէթ շնորհէ՛ ինձ տեղանիգ փրչանքներ.»
Կըսէ՛ր, ճանճին ակռաները կը կրճատէր,
Խեղճին ձայնը գոգցես ցըրտէն կը մոռեր։
Բայց մեղուիկը ներսը հանգիստ երգ կերգէր.
Դուրան անմրմին սրտին եղերն կը հոլէր։
Այսպէս քանի՛ անթիւ ծոյլեր,
Ունայն տեղը իրենց օրեր,
Պար քաշելով միշտ անցուցեր.
Ու հաքն ճանճիս պէս են լացեր։

ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հիւսիսային ծեր մը։

Այլեւոր ծերունի մը բոլոր երկիրներն ու քաղքերը պտըտելէն վերջը օր մը լեռան մը վրայ ծառի մը բուներին տակ նստաւ հոգնութիւն առնելու։ Շատ չանցաւ երիտասարդ մը տեսաւ արտորանօք կերթար. կանչեց իր քովը, նստէ՛ ըսաւ ծերուկը, նստէ՛ քիչ մը հանգչինք, ես ալ նոյն ճամբուն ճամբորդեմ, երիտասարդը շափազանց դեղեցիկ էր, այտերը կարմիր, տղատ վրձինի մը քաշուած յոնքերը իւր վառ վառուն աչքերուն զմայլելի աղուորութիւն մը կուտային. գլուխը ծաղկե պսակ մը կը զարդարեր, վարդն ու մանիշակը հոդմակած մազերուն էր խառնուած, շրթունքներուն մէջէն ելած շունչը՝ լեռանց վարի ծաղիկներուն պէս անուշ կը բուրեր։ Ծերը՝ որուն ճերմակ մորուքը մինչև ծոցը կը հասնէր իւր դաւազանին կռթնած երիտասարդին դեղեցկութեանը վրայ կը մտածէր։

Այս երկուքը խօսած ժամանակին երիտասարդը սկսաւ մթել, ու ձեռվընները կը շփեր տաքցրնելու. ծերը սկսաւ շարունակել, թէ երբ ուզեմ դեռէ մը անցնիլ, կը փչեմ ու կը կարծրացնեմ ջանի, մէկ խօսքով կը կեցնեմ, միայն հրամանաւս ամէն բան կը կարծրանան. այժմ անսահման է, աշխարհ հրամանիս հպատակ։

Երիտասարդը՝ ծերին պարծանքներէն ձանձրացած, Սիրելիս ըսաւ շնորհք ընէ որ ես ալ խօսիմ. խօսէ ըսաւ ծերուկը, ականջս թէ և ծերէ, բայց լսելու։ Այս ալ, ըսաւ երիտասարդը, բոլոր երկրիս վրայէն կանցնիմ կերթամ, կը տեսնամ աշխարհ ձիւնով ծածկած, ջուրերը սառած, բայց միայն մէկ հրամանով, սառերը կը հալին. դեռերը կը շարժին. առուակները կը վազեն, կանաչ տեղուս դրախտ կը դառնայ, ծաղկները կը ծլին, թռչունները կը հրճուին, ու քաղաքը զօրաթիւնդ կ'ուշնչացնեմ։

Ծերուկը խորին հառաչանքով մը գլուխը երերցնելով, գիտեմ, ըսաւ, գիտեմ որ Գարունն ես. դուն ալ կրկնեց երիտասարդը, Ձմեռն ըլլալդ տարակոյս չկայ, բայց իմ նըսած երկիրս ալ չես կրնար համարձակիր մտնելու, բայց այսօրուան օրս ծեր ես ու տարեւոր կը խնայեմ քեզ բոլորովին անհետ ընելու, գնա շարունակէ ճամբադ, կը խոստանամ քիչ ժամանակէն քեզ տեսնելու. մինչև բարով ես կերթամ կոր ուշ կանուխ քեզ կը տեսնամ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ընտանեաց ճշմարիտ հայր։ [1]

Հայրը չը գիտնալ ձեւացուց, տեղեկացաւ գաղտնաբար իւր որդ-

[1] Տես Թիւ 9 երես 144։

կամ՝ Թշուառ ըլլալս ։

Թէ որ չարաճակ անխոնջ աշխա-
տութեամբ ուսմանց հետեւիս, և կը-
րօնքը, պատիւը, և առաքինութիւնը
միշտ քու հետդ ունենաս, երբէք
ուրիշի վիճակին չի պիտի փափաքիմ.
բայց թէ որ երիտասարդական կրքե-
րէ յաղթուելով՝ տեսնամ զքեզ օր մը ան-
կարգութեան և մոլութեան մէջ ըն-
կղմեալ, ալ և ոչ մէկ բան մը պիտի
զիս մխիթարէ. և այնպէս ցաւոց և
վշտաց զոհ ըլլալով պիտի մեռնիմ ։
Թէ որ քու ողքաս հօրդ չափազանց
ողբը բաւական չէ զքեզ ծուլերէ և
չար ընկերներէ ետ կեցընելու. թող
զքեզ հրամարեցընէ մեծ մխիթարիր Աս-
տուծոյ մը բարկութիւնը ; և սոսկալի
թշուառութեան մը նախատեսութիւնը,
որով պիտի անցընես քու օրերդ » ։

Այս ըսելով պատաւ փափկուէք սի-
րելի տղան, և երկուքն ալ շատ ար-
տասուք թափելով՝ իրարմէ զատուե-
ցան ։ Նաքլէթ անշարժ կեցած կը
դիտէր իւր հայրը. Լէօնարդն ալ,
քանի որ կրնար տեսնալ, աւեն ա-
ւեն կը դառնար, և բարձր ձայնով
կ'ողջունէր, և ձեռքը վեր կը վերցը-
նէր զանիկայ քաջալերելու միտօք ։
Վերջապէս տեսութեամբ ալ իրար-
մէ զատուեցան, բայց սրտերնին միա-
ցեալ և սեղմեալ էին ։

Ամենեւին ազդեցութիւն մը չէին
ըներ Նաքլէթին սրտին վրայ այն ա-
մեն բաները, որ շատ անգամ Պիւ-
ղայի դպրոցութեան մէջ ապրելու
վարժուող երիտասարդներուն սիրտը
կը յափշտակեն ։ Ուրիշ բան չէր տես-
նար, ուրիշ բան չէր լսեր, այլ մի-
այն սիրելի հօրը դէմքը, արտասու-
քը, և անոր ձայնը ու խօսքը ։ Ին-
քնիրեն խօսք կը դնէր որ անոր եր-
բէք ցաւոց և դառնութեան պատ-
ճառ չըլլայ ։ Բայց մէկ քանի ամիս
անցնելէն ետքը Լէօնարդ չէր կրնար
իւր տղան տեսնալու սաստիկ փափա-
քը ուշացընել. այլ և համոզուած
ըլլալով, որ մարդու մը յաջողութիւ-
նը իւր սկզբունքէն կախում ունի,
կ'ուզէր տեսնալ թէ Նաքլէթ իւր
կամացը համեմատ կընթանա՞յ ։ Նոր
լսած էր երեկոյին քիչ մը հանդար-
տելու համար բարեկամի մը տուն
երթայ, ուրկէ կրնար գեղեցիկ սո-
վորութիւններ, ու պարկեշտութիւն
սորվել ։ Լէօնարդ ուզեց տղան զար-
մացընել իրիկուան դէմ քա՛ղաք
հասնելով, և շիտակ բարեկամին տու-
նը երթալով տեսնայ թէ հո՞ն է արդ-
եօք տղան. և իւր հրամանը կը կա-
տարէ՞ թէ չէ ։ Հոն հասնելով հար-
ցուց և լսելով որ ամէն իրիկուն նոյն
ժամուն կու գայ, շատ ուրախացաւ.
բայց դիպուածով Նաքլէթ նոյն ի-
րիկունը սովորականէն քիչ մը ուշա-
ցաւ ։ « Մի թէ այս ժամուս չէ՞ որ
տղաս հոս կը գտնուէր, ինչ եղաւ
արդեօք որ դեռ երեւան չելաւ » ու-
սկսաւ շատ կասկածներու երթալ ։
Վերջապէս Նաքլէթը հասաւ, և
հայրը տեսնալու անակնկալ զուար-
ճութեանը վրայ զարմացած. « դո՛ւն
հոս, գոչեց. և ի՞նչ կայ որ այս ատեն
քաղաքը եկար » . ոչինչ, միայն քեզ
տեսնելու փափաքով հոս եկայ. ու-
րեմն, Նաքլէթդ իմ, ի՞նչ կ'ընես,
քաղաքը քեզի ի՞նչպէս կու գայ. այս
փոքրիկ խօսակցութենէն ետքը բա-
րեկամէն զատուելով, Նաքլէթին
բնակած պարկեշտ ընտանեաց տունը
գացին, ուր Լէօնարդ գիշերը պիտի
անցընէր ։ Դեռ չի քնացած, Նաք-
լէթ երկար պատմեց հօրը քաղաքին
մէջ տեսած նոր բաները, և իւր դըպ-
րոցին ու ուսուցչացը ճիշդ հաշիւը
տուաւ. Լէօնարդ կատարեալ հա-
ճութեամբ մտիկ ըրաւ, և իր ուրա-
խութեամբ հանդարտ քնացաւ ։ Ա-
ռաւօտուն տղուն ուսուցիչները տես-
նալու գնաց և ամէնէն ալ տղուն բա-
րուցը վրայ գովութիւններ լսեց, և

բանիս համար մենք ալ պարտական ենք Պ. Պուլէլմս Սմիթհ հռչակաւոր ուսուցչին որ յատկապէս իրեն այս գովելի գիտութեան մէջ անզուգական ըլլալուն համար թէ իր և թէ օտար ազգաց ուսումնականք զինքը “Հայր Անգղիական երկրաբանութեան„ անուաներ են։

Այս մեծ ճշմարտութիւնը՝ նոյն գիտութեան գլխաւոր սկզբունքը կոչւեցաւ, ուրկէ շատ ուրիշ ճշմարտութիւններ թէ գործնական և թէ տեսական կախեալ են։

Անանկ սահմաններ կան՝ որոնց վրայ բնական կենդանական մնացորդները կը գտնուին, թէև երկար տարածութեամբ և երբեմն կիսագնտի մէկ կողմէն միւսը կանցնին սակայն տեղերական չեն ըլլար. ասկէ կը յայտնուի թէ կենդանեաց խումբերը իրենց աշխարհագրական սահմաններ ունեցած պիտի ըլլան։ Յայտնի է որ գործարանաւորութեան փոփոխութիւնները երկրին բարեխառնութեան տարբեր վիճակին, մթնոլորտին և ջրերուն յարմարած էին, և աներկբայաբար մեկնելու ալ համեմատ՝ իրենց փոխադարձ վերաբերութիւններովը իբր կենդանական կենաց բաժանորդներ։

Բրածոյներէն 'ի զատ՝ որոնք հողերու դասաւորաց մեծ դրութեանցը բնական են, կան ուրիշներ ալ որոնք անոնց ունեցած առանձնաւորութիւններովը թէ յատակի և թէ վրայի գլխաւոր կազմութիւնները կը միացնեն։

Խմային, ողորկապատեան կամ ատային մնացորդներ պարունակող հողոց դասաւորութիւնները նոյն կենդանեաց պղտոր և ամուլ յատակներուն վրայ ապրած ու մեռած ըլլալուն ընդհանրապէս երևոյթներ կընծայեն։ Աս բանս եղական տեսակներուն գիւղէն և կազմութեանց յարակցութենէն յայտնի կըլլայ, որոնք խումբ խումբ ցրուած գեղեցիկ կերպով մը տարածուած և չափաւոր տեղուանք բնած են. և մեկմալ իրենց նուրբ, փափուկ և դիւրաբեկ մասունքներուն պահպանութենէն։

Ի վերայ այսր ամենայնի անանկ գիւղուածներ կը պատահին որոնց մէջ թէ ոտնկերուն, թէ խեցիներուն, կամ թէ ոսկրներուն կենդանական մնացորդները անուշ ջրի հանքերով կամ ծովուն մակընթացութիւններով կամ յորձանքներովը իրենց բուն ծովերէն ջուրը առած տարած ըլլալուն վկայութիւնը կը ցուցնեն. ու այս կերպով ուրիշ զանազան տեղեր փոխադրուեր են, որոնց մէջ յատակին ճնշումէն կամ ուրիշ արգելքէ կամ ջրին զօրութեանը դադրումէն անանկ մնացեր ու հոն այն բաժնուած մասունքները տղմալից յատակին մէջ թաղուեր են։

Պիտի շարունակուի ։

Բարոյական առածներ ։

1—Հարստութեան մէջ ճշմարիտ օգուտ մը չկրնար ըլլալ. բայց միայն զանի բաժնելով։

2—Քաղաքական արարողութեանց (փոլիթիգայ) չափազանցութիւնը, կրթութեան պակասութիւնն է։

3—Ամենալաւ քաղաքավարութիւնն այն է, որ կարգիլէ բոլոր աւելորդ ձևակերպութիւնները ։

4—Անիրաւութեան մը համար վրէժ առնելը՝ մարդս միայն իր թշնամիին հաւասար կընէ. բայց անոր զանցառութիւն ընելը, զանի վեհանձն կը կարգէ ։

5—Աչքի մը այնչափ հաճելի առարկայ մը չկայ՝ բայց 'ի այն մարդուն երեսէն, որուն բարիք ըրած ես ։